

**Պայրոցների ուսումնական արհեստանոցների նյութատեխնիկական
բազաների արդի վիճակի հետազոտում**

*Խողերյան Բորիս,
Հակոբյան Աննա,
Պողոսյան Հովհաննես*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-102>

***Հանգուցային բառեր.** հաստոցներ, գործիքներ, սարքավորումներ, ուսումնական միջավայր, գործնական հմտություններ, կտրող և չափող գործիքներ, նյութատեխնիկական պայմաններ, կրթության որակ*

Նախաբան

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտը հանդիսանում է ուսուցման անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դպրոցականների դաստիարակության և զարգացման գործում: Տեխնոլոգիան բազմաբնույթ առարկա է, իր մեջ ընդգրկում է բնական և արհեստական նյութերի մեխանիկական և գեղարվեստական մշակումներ [1-3]: Տեխնոլոգիայի դասերը կրում են համակցված բնույթ՝ ներառելով թե՛ տեսական գիտելիքներ, թե՛ գործնական աշխատանքներ: Նախկինում բոլոր դպրոցները ունեին հազեցված ուսումնական արհեստանոցներ և մասնագիտացված կաբինետներ: Նշված արհեստանոցներում տեղադրված էին փայտամշակման և մետաղամշակման ուսումնասարտադրական հաստոցներ և սարքավորումներ: Բոլոր արհեստանոցները, բացի անհրաժեշտ հաստոցներից, ապահովված էին նաև կտրող և չափիչ գործիքներով [5]: Ցավոք, պետք է նշել, որ հետխորհրդային տարիներին, հատկապես 1990-ականներին մեր հանրապետության դպրոցների մեծամասնությունում ուսումնական արհեստանոցները քայքայվեցին, շատ քիչ դպրոցներում պահպանվեցին դրանք: Մինչդեռ տեխնոլոգիայի արհեստանոցները կարևոր դեր են կատարում սովորողների գործնական հմտությունների ձևավորման, ստեղծագործական մտածողության զարգացման և տեխնիկական գիտելիքների ամրապնդման գործում:

Հետազոտության հիմնախնդիրը: Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ Հայաստանի հանրակրթական դպրոցների մեծամասնությունում տեխնոլոգիայի ուսուցողական արհեստանոցները ապահովված չեն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով կամ գտնվում են քայքայված վիճակում, ինչը խոչընդոտում է լիարժեք դասապրոցեսի կազմակերպմանը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել դպրոցում գործող տեխնոլոգիայի ուսումնական արհեստանոցների ներկայիս վիճակը, գնահատել դրանց հազեցվածությունը և պարզել հնարավոր ուղղություններ՝ ուսուցման արդյունավետության և որակի բարելավման համար:

Հետազոտության նորույթը: Հետազոտությունը ներկայացնում է համապարփակ գնահատումը Հայաստանի հանրակրթական դպրոցներում տեխնոլոգիայի ուսումնական արհեստանոցների նյութատեխնիկական բազայի վերաբերյալ ընդգրկելով դրանց սարքավորումներն ու գործիքները, գործունեության մակարդակը:

Հիմնական նյութ: «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ ուսուցումն անմիջականորեն կախված է դպրոցների նյութատեխնիկական բազայից, որը ապահովում է տեսական գիտելիքների կիրառումը գործնականում:

Նյութատեխնիկական բազան «Տեխնոլոգիա» դասերի համար ընդգրկում է փայտամշակման և մետաղամշակման ուսումնական արհեստանոցները, անհրաժեշտ սարքավորումները և հաստոցները, կտրող և չափիչ գործիքները:

Դպրոցների նյութատեխնիկական բազայի հագեցվածության մասին տեղեկությունները ստացվել են հարցումների միջոցով, ընդգրկվել են մոտ 100 դպրոցներ Երևանում և մարզերում: Այն դրպոցներ, որոնց նյութատեխնիկական բազան գտնվում է բարենպաստ վիճակում, կատարվել է այցելություն, մասնավորապես՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց, Արմավիրի մարզի Գետաշեն բնակավայրի միջնակարգ դպրոց, Էջմիածին քաղաքի թիվ 5 ավագ դպրոց, Կոտայքի մարզի Արովյանի թիվ 2 հիմնական դպրոց, Եղվարդ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց, Երևան քաղաքի թիվ 33 հիմնական դպրոց, Երևան քաղաքի Նար-Դոսի անվան թիվ 14 հիմնական դպրոց:

Ստորև ներկայացվում են որոշ դպրոցների նյութատեխնիկական բազաների վերաբերյալ տեղեկություններ՝


1. Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը գտնվում է Արարատ քաղաքի Խանջյան փողոց 63 հասցեում: Դպրոցը գործում է 1976 թվականից և ունի համայնքային կրթօջախի երկարամյա գործունեության պատմություն: Դպրոցի «Տեխնոլոգիայի» ուսումնական արհեստանոցը հագեցված է բոլոր սարքավորումներով: Նկար 1-ում բերվում է Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի տեխնոլոգիայի հասկցված ուսումնական արհեստանոցի տեսքը:



Նկար 1. Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցի ընդհանուր տեսքը


2. Արովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը նորակառույց կրթօջախ է: Այն կառուցվել է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի համաֆինանսավորմամբ և նախատեսված է շուրջ 1000 աշակերտի համար: Դպրոցը շահագործման է հանձնվել 2025 թվականի մարտի 1-ին: Շենքն ունի երեք վերելակ, լաբորատոր դասարաններ: Դպրոցը հագեցած է ուսումնական բոլոր սարքավորումներով:

Նկար 2-ում ներկայացված են տեխնոլոգիայի ուսումնական արհեստանոցների նկարները:



Նկար 2. Աբովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցների ընհանուր տեսքը

3. **Շղվարդի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը** հագեցած է ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Նկար 3-ում ներկայացված է դպրոցի ուսումնական արհեստանոցի կահավորումը:



Նկար 3. Շղվարդի թիվ 2 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցի սարքավորումները

4. **Երևան քաղաքի թիվ 33 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը** հիմնադրվել է 1921 թվականին: 1982 թվականին կառուցվել է Միքայել Նալբանդյանի անվան թիվ 33 միջնակարգ դպրոցի նոր շենքը՝ բաղկացած 2 մասնաշենքերից: Դպրոցը հագեցած է ուսումնական բոլոր սարքավորումներով: Նկար 4-ում ներկայացված են դպրոցի ուսումնական արհեստանոցի կահավորման նկարները:



Նկար 4. Երևան քաղաքի թիվ 33 հիմնական դպրոցի հաստոցները

5. Երևան քաղաքի թիվ 14 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1929 թվականին: Ներկայիս տիպային շենքը շահագործման է հանձնվել 1984 թվականին և նախատեսված է 1176 աշակերտի համար: Դպրոցը հագեցած է ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Նկար 5-ում ներկայացված է դպրոցի ուսումնական արհեստանոցի կահավորումը:



Նկար 5. Երևան քաղաքի թիվ 14 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցի ընդհանուր տեսքը


6. Արմավիրի մարզի Գետաշեն բնակավայրի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ - ը իրականացնում է «AgroSchool» ջերմոցային ծրագիրը, որի շրջանակում աշակերտները մասնակցում են գյուղատնտեսական աշխատանքների և ձեռք բերում նյութական արտադրության ու սննդի տեխնոլոգիայի գործնական հմտություններ: Դպրոցը հագեցած է ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով:

Նկար 6-ում պատկերված են Գետաշենի միջնակարգ դպրոցի ուսումնական հաստոցները:



Նկար 6. Գետաշենի միջնակարգ դպրոցի ուսումնական հաստոցներ

Հետազոտության շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր կատարված այցերի ընթացքում իրականացվել են հարցումներ տարբեր դպրոցների տնօրենների շրջանում, ինչպես նաև կատարվել է ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն: Հարցմանը մասնակցել են շուրջ 100 հանրակրթական դպրոցներ:



Տրամագիր 1. Հանրակրթական դպրոցներում «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական արհեստանոցների առկայության վերաբերյալ

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հարցված դպրոցներից 82-ում տեխնոլոգիայի առարկայի ուսումնական արհեստանոցներ առհասարակ բացակայում են: 8 դպրոցներում առկա արհեստանոցները չեն գործում՝ հին և քայքայված վիճակում գտնվելու պատճառով: 3 դպրոցներում ստեղծված են համեմատաբար նորմալ պայմաններ, սակայն բացակայում են համապատասխան մասնագետ-մանկավարժները, որոնք կարող են շահագործել սարքավորումները և կազմակերպել ուսուցման գործընթացը: Միայն 7 դպրոցներում առկա են գործող և բավարար հազեցվածությամբ ուսումնական արհեստանոցներ, որտեղ իրականացվում է լիարժեք դասապրոցես: Ստացված արդյունքները վկայում են, որ պետական նոր չափորոշչին համապատասխան տեխնոլոգիա առարկայի արդյունավետ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ է հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի համալիր վերազինում և արդիականացում:

«Տեխնոլոգիա առարկայի ուսումնական արհեստանոցների նյութատեխնիկական բազաների արդի վիճակի հետազոտումը» թեմայի SWOT վերլուծություն

«Տեխնոլոգիա առարկայի հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազաների արդի վիճակի հետազոտումը» թեմայի SWOT վերլուծությունը (Strengths, Weaknesses, Opportunities, Threats, տե՛ս աղյուսակ 1) կօգնի պարզել ինչ ուժեղ կողմեր և հնարավորություններ ունի հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազան:

SWOT վերլուծության արդյունքները

<p>Ուժեղ կողմեր (Strengths)</p> <p>Տեխնոլոգիա առարկան ներառում է պրակտիկ աշխատանքներ, որոնց համար անհրաժեշտ են հիանալի նյութատեխնիկական պայմաններ՝ բարձրորակ սարքավորումներով ու նյութերով: Նման պայմանները կարող են ապահովել սովորողներին բարձրորակ կրթություն:</p>	<p>Թույլ կողմեր (Weaknesses)</p> <p>Որպես կանոն, հանրակրթական դպրոցները չեն ունենում բավարար բյուջե նոր տեխնիկայի ձեռքբերման կամ արդիականացման համար, ինչը կարող է սահմանափակել կրթական գործընթացի արդյունավետությունը:</p>
<p>Հնարավորություններ (Opportunities)</p> <p>Համալրված նոր սարքավորումների և ավտոմատացման համակարգերի ներդրումը կարող է էապես բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:</p>	<p>Վտանգներ (Threats)</p> <p>Ուսումնական արհեստանոցներում տեխնիկական լուրջ խափանումները կամ սարքավորումների մաշվածությունը կարող են սահմանափակել ուսումնական գործընթացը և միաժամանակ բերել վտանգավոր իրավիճակներ:</p>

Եզրակացություն

Ամփոփելով մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

- «Տեխնոլոգիա» առարկայի դասերը կրում են տեսական և գործնական աշխատանքների համակցված բնույթ, ինչը պահանջում է համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայություն:
- Միջին դպրոցում լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված փայտամշակման և մետաղամշակման արհեստանոցներ կամ համակցված արհեստանոց:
- «Տեխնոլոգիա» առարկայի դասերը լիարժեք կազմակերպելու և անցկացնելու նպատակով անհրաժեշտ է արհեստանոցները ապահովվել անհրաժեշտ կտրող և չափող գործիքներով:
- Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրապետության մեծ մասի դպրոցներում «Տեխնոլոգիա» առարկան չունի բավարար նյութատեխնիկական բազա, իսկ որոշ դպրոցներում առկա արհեստանոցները չեն գործում:
- «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական արհեստանոցները անհրաժեշտ է կառավարել ուսումնաարտադրական հաստոցներով, այդ թվում խառատապտուտակահան, հորիզոնական ֆրեզերային, գայլիկոնային և փայտամշակման խառատային հաստոցներով, որոնք արտադրուվում են ՌԴ-ում:

DOI: [https://doi.org/ 10.58726/27382923-2026.1ns-102](https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-102)

Գրականություն

1. Հովսեփյան Ս. և ուրիշներ, «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր (1–7-րդ դասարաններ), Երևան, 2012, 116 էջ:
2. Հովսեփյան Ս., Լևոնյան Հ., Տեխնոլոգիական կուլտուրայի ձևավորումը որպես «Տեխնոլոգիա» կրթական համակարգի հիմնական նպատակ, Մանկավարժություն, № 4, Երևան, 2003:
3. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր (1–6-րդ դասարաններ). Երևան, 2021 Հասանելի է՝ <https://escs.am/files/files/2021-05-06/52281f19fbac2f31da817f6997111733.pdf> (դիտվել է 20.09.2025):
4. Тхоржевский Д. А. Методика трудового обучения: учеб. пос. для уч-ся пед. училищ. Москва: Просвещение, 1981, 268 с.
5. Хотунцев Ю. Л. Образовательная область «Технология» в культуросообразной школе. Мир образования – образование в мире, 2002, №2, с. 122–132.

Исследование современного состояния материально-технической базы школьных мастерских

*Ходерян Борис,
Акопян Анна,
Погосян Оганес*

Резюме

Ключевые слова: станки, инструменты, оборудование, учебная среда, практические навыки, режущие и измерительные инструменты, материально-технические условия, качество образования

В статье рассматривается текущее состояние и материально-техническое обеспечение учебных мастерских по предмету «Технология» в общеобразовательных школах Армении. Представлены данные школ Еревана и различных регионов, охватывающие мастерские по деревообработке и металлообработке, необходимое оборудование, станки, режущие и измерительные инструменты, а также средства безопасности. Исследование показывает, что большинство школ не имеют достаточной материально-технической базы, а существующие мастерские часто находятся в ветхом состоянии или лишены квалифицированных педагогов для проведения эффективных занятий. Анализируются ключевые проблемы и потенциальные риски, а также даются рекомендации по повышению качества обучения и результатов учебного процесса, включая внедрение современного оборудования, автоматизированных систем и комплексного обслуживания мастерских. Полностью оснащенные и модернизированные мастерские позволяют педагогам сочетать теоретические знания с практическими навыками, развивая у учеников творческое мышление, технические способности и практические умения при обеспечении безопасной и эффективной учебной среды. Подчеркивается, что совершенствование материально-технической базы необходимо для успешной реализации учебной программы «Технология». Улучшение ресурсов способствует развитию у школьников навыков решения проблем, практического мышления и понимания механических и художественных процессов. Результаты исследования показывают важность постоянных инвестиций в школьные мастерские для обеспечения комплексного обучения и практического опыта.

Study of the Current State of the Material and Technical Base of School Workshops

*Khoderyan Boris,
Hakobyan Anna,
Poghosyan Hovhannes*

Summary

Key words: *machines, tools, equipment, learning environment, practical skills, cutting and measuring tools, material-technical conditions, quality of education*

The article examines the current state and material-technical provision of technology classrooms in Armenian general education schools. Data from schools in Yerevan and various regions are presented, covering woodworking and metalworking workshops, necessary equipment, machinery, cutting/measuring tools, and safety resources. The study reveals that most schools lack sufficient material-technical resources, and existing workshops are often dilapidated or lack qualified instructors to conduct effective lessons. The research analyzes key challenges, potential risks, and provides recommendations to improve teaching quality and learning outcomes, including the introduction of modernized equipment, automation systems, and comprehensive maintenance plans. Fully equipped and modernized workshops allow teachers to combine theoretical knowledge with practical skills, fostering students' creative thinking, technical abilities, and hands-on competencies while ensuring a safe and efficient learning environment. The article emphasizes that improving the material-technical base is essential for the effective implementation of the "Technology" curriculum. Enhancing resources supports the development of students' problem-solving skills, practical thinking, and understanding of mechanical and artistic processes. The findings highlight the importance of continuous investment in school workshops to ensure that students acquire both theoretical knowledge and practical experience in technology education.

Ներկայացվել է 01. 04. 2026 թ.
Գրախոսվել է 13. 04. 2026 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.